



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա ՆՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱԱՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը ուղղված է համալսարանի որակի ապահովման համակարգի վերափոխմանը, բարելավմանը և զարգացմանը:

Համալսարանում Որակի ներքին ապահովման համակարգի *վերանայումը* ենթադրում է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ժամանակային, ֆինանսական և նյութական ռեսուրսների վերլուծությունը, վերանայումը կամ վերափոխումը:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հիմք կարող են հանդիսանալ՝

1. Համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը,
2. Համալսարանի որակի ապահովման ռազմավարությունը,
3. Համալսարանի բոլոր ոլորտների գործունեության մշտադիտարկման և գնահատման արդյունքները:
4. Համալսարանի գործունեության ներքին և արտաքին աուդիտների արդյունքները,
5. Որակի ապահովմանը վերաբերող ստանդարտների վերափոխումը,
6. Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի վերլուծության արդյունքները, մասնավորապես SWOT վերլուծությունը,
7. Որակի ապահովման համակարգի բենչմարքինգի արդյունքները,
8. Համալսարանի շահակիցների որակի ապահովման համակարգի վերաբերյալ կարծիքների վերլուծության արդյունքները:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման գործիքներ կարող են հանդիսանալ՝

1. Համալսարանի որակի ապահովման ներքին համակարգի բարելավմանը և վերափոխմանը ուղղված ռեկտորի հրամանները,
2. Որակի ներքին ապահովման համակարգի վերափոխմանը ուղղված գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների արձանագրությունները,
3. Շահակիցներից ուղղված հարցման թերթիկները:

Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման մեխանիզմներ կարող են հանդիսանալ՝

1. Աուդիտները և մշտադիտարկումները,
2. Վերանայմանը ուղղված Գիտական խորհրդի որոշումները
3. Ուղղիչ գործողությունները,
4. Հարցումները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԱՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱԱՀ որակի ապահովման պլանավորումը և վերանայումը հիմնված է **Պլանավորում-Իրականացում-Գնահատում-Վերանայում (Պ-Ի-Գ-Վ)** մոդելի վրա և բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- պլանավորման շրջանակ,
- պարբերական պլանավորման և վերանայման շրջափուլ,
- ֆակուլտետային և կառավարչական կառույցների վերանայում,
- մասնագիտական հավատարմագրում,
- ՄԿԾ-երի, դասընթացների ծրագրերի, դասավանդման մեթոդների պլանավորում, գնահատում և վերանայում,
- պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատում և վերանայում,
- շահակիցների շրջանում հարցումների կազմակերպում և անկետավորում,
- համալսարանի գործունեության արդյունավետության տարեկան գնահատում և վերանայում,
- բենչմարքինգ:

2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որակի ապահովման համակարգի վերանայման նպատակն է որակի ապահովման համակարգի բարելավումը և կատարելագործումը:

Որակի ապահովման համակարգի վերանայման խնդիրներն են երաշխավորել՝

- Համալսարանի որակի ապահովման համակարգի աշխատանքի արդյունավետությունը տարբեր մակարդակների վրա,
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի արդիականությունը,
- Համալսարանի դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը:

Որակի ապահովման համակարգի վերանայման համար անհրաժեշտ է կատարել՝

- որակի ապահովմանն ուղղված ռազմավարության վերանայում և կատարելագործում,
- որակի ապահովմանն ուղղված քաղաքականության և ընթացակարգերի վերանայում և կատարելագործում,
- որակի ապահովման համակարգի կառուցվածքային փոփոխություններ,
- մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատում, վերանայում և կատարելագործում,
- դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատում և զարգացում,
- շահակիցների հետ հետադարձ կապի ապահովում,
- բենչմարքինգի կազմակերպում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Համալսարանի որակի ապահովման համակարգի վերանայման համար հիմնական նորմատիվային փաստաթղթեր են հանդիսանում ՀԱԱՀ Ռազմավարական պլանը և Որակի ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ

Որակի ապահովման համակարգի վերանայման գործընթացը երաշխավորում է, որ բազմակողմանի վերանայումը իրականացվում է միջազգային չափանիշներին համապատասխան: Սովորաբար, այն ներառում է Դեմինգի ցիկլի հիմնական չորս փուլերը:



Վերանայման գործընթացի փուլերը.

1. *Պլանավորման փուլում* կազմվում է աշխատանքային խումբ (վերանայող թիմ): Տվյալ փուլում մուտքային ինֆորմացիան ներառում է տեխնիկական առաջադրանքը և այլ սկզբնական տեղեկություններ, իսկ ելքում պետք է լինի համալսարանի գործունեության կամ հստակ գործընթացի վերանայման պլանը: Պլանը կարող է լինել երկարաժամկետ, միջնաժամկետ կամ կարճաժամկետ՝ կախված վերանայման տեսակից: Պլանը հաստատելուց հետո անցում է կատարվում երկրորդ փուլ (*Իրականացում*):
2. *Իրականացման փուլ:* Վերանայող թիմը իրականացնում է վերանայման գործընթաց՝ օգտագործելով հաստատված աշխատանքային ծրագիրը, որը ներառում է *վերանայման մեթոդներ, մեխանիզմներ և ստուգման թերթիկներ*՝ հիմքերի և իրադարձու-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

թյունների արձանագրման համար: Տվյալ փուլի ելքում ստացվում են դիտումների արդյունքները: Արդյունքները քննարկվում են համալսարանի տվյալ ենթակառույցի կամ գործողության համար պատասխանատուի հետ, տրվում է խորհրդատվություն: Կառույցի կողմից կազմվում է ուղղիչ կամ նախազգուշացնող գործողությունների պլան՝ համաձայն <Ուղղիչ և նախազգուշացնող գործողություններ> ընթացակարգի:

3. *Հաշվետվողականություն:* Վերանայող թիմը, օգտագործելով արդյունքները նախապատրաստում է հաշվետվություն: Հաշվետվությունը ներկայացվում է համալսարանի գիտական խորհուրդ՝ տվյալ ուղղությամբ որոշումներ կայացնելու նպատակով:
4. *Կատարման ստուգում:* Վերանայող թիմը գնահատում է, թե որքանով է իրականացված ուղղիչ գործողությունների պլանը և նրանում նշված գործողություններից որևէ մեկի չիրականացման պատճառները: Համապատասխան կատարողականի ստուգման գործողությունները անհրաժեշտ են երաշխավորելու համար, որ համաձայնեցված գործողությունների պլանը իրականացված է կամ նախաձեռնված են համարժեք քայլեր պլանի կատարման համար: Կազմվում է բարելավմանը ուղղված պլան-ժամանակացույց:

Վերանայումը ներառում է տարբեր գործընթացների վերանայում և ուղղված է համալսարանի գործունեության շարունակական բարելավմանը, այլ ոչ թե վերահսկմանը:

Վերանայման գործընթացը հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝

- վերանայման գործընթացը պետք է հիմնված լինի փաստերի վրա,
- վերանայումը պետք է լինի արդյունավետ,
- վերանայում պետք է լինի հստակ և թափանցիկ:

Վերանայման գործընթացը պետք է ներառի՝

- տեխնիկական առաջադրանք (նշելով վերանայման ոլորտը),
- վերանայման աշխատանքային պլան,
- պատասխանատուների որոշում,
- յուրահատուկ, սակայն իրատեսական վերանայման ժամկետ,
- համապատասխան արտաքին ստանդարտներ և չափանիշներ,
- հղումներ համապատասխան արդյունավետության որոշման ցուցանիշների վրա,
- շահակիցների անկետավորում,
- արդյունքների վերլուծություն և հաշվետվության կազմում:

Որակի ապահովման համակարգի վերանայման համար մշակվում են մեխանիզմներ և գործիքներ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

5. ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՏԻՊԵՐԸ

5.1. Որակի ապահովման համակարգի վերանայման տիպերն են՝

- *Ամբողջական վերանայում*, երբ վերանայման են ենթարկվում բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները: Ամբողջական վերանայումը սովորաբար տևում է 30 շաբաթ:
- *Մասնակի վերանայում*. Առանձին ստորաբաժանումների կամ գործընթացների ինքնավերլուծություն և վերանայում:

5.2. Որակի ապահովման համակարգի վերանայումը կարող է իրականացվել 3 հիմնական մակարդակի վրա՝

- Ինստիտուցիոնալ,
- Ծրագրային,
- Ֆինանսական:

5.3. Որակի ապահովման համակարգի վերանայման համար հիմք են հանդիսանում՝

- ներքին աուդիտները/ մշտադիտարկման արդյունքները:
- արտաքին աուդիտի արդյունքները:

Ներքին աուդիտը համալսարանում պետք է իրականացվի պարբերաբար՝ աուդիտի անցկացման սկզբունքների հիման վրա: Որակի ներքին համակարգի վերանայման մեխանիզմներից է փորձագիտական գնահատումը:

Աուդիտները պետք է անցկացվեն բարձր որակավորում ունեցող աուդիտորների կողմից, որոնք պետք է լինեն անկախ:

5.4. Վերանայումը կարող է իրականացվել կոմպլեքս ձևով, ինչպես նաև ըստ ուղղությունների՝

- Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատում և վերանայում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի գնահատում և վերլուծություն:
- Ինստիտուցիոնալ մակարդակի վրա ինքնագնահատում և վերանայում:
- Բենչմարքինգի իրականացում:

5.5. Վերանայում իրականացնելու նպատակով կատարվում է համալսարանի տարբեր շահակից կողմերի անկետավորում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

6.1.	ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ	Համալսարանը և կառուցվածքային ստորաբաժանումները իրենց աշխատանքը կազմակերպում են՝ հիմնվելով համալսարանի ռազմավարական պլանի և կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան պլանների վրա: Համալսարանի Ռազմավարական պլանը ենթարկվում է վերանայման 5 տարին մեկ: Վերանայումը ներառում է ինքնագնահատման գործընթացը, բենչմարքինգը, շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը և արտաքին աուդիտը: Վերանայումը հիմնվում է բարելավմանն ուղղված պլանների և կայացված որոշումների վրա:
6.2.	ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ	Որակի ոլորտին ուղղված փաստաթղթերը՝ քաղաքականությունը և ընթացակարգերը, ենթարկվում են ինքնագնահատման և անհրաժեշտության դեպքում վերափոխվում՝ մասնակի կամ ամբողջությամբ:
6.3.	ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ	Որակի ապահովման համակարգի կառուցվածքային վերանայումը իրականացվում է վերանայող աշխատանքային խմբի կողմից, քննարկվում համալսարանի գիտական խորհրդում և ենթարկվում փոփոխության ռեկտորի հրամանով:
6.4.	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ	Համալսարանը պարբերաբար կազմակերպում է մասնագիտությունների կրթական ծրագրերի, դասընթացների ծրագրերի, դասավանդման գնահատում: Վերանայումը ներառում է մշտադիտարկման գործընթաց:
6.5.	ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ	Համալսարանը դասախոսական կազմի որակի ապահովման համար կազմակերպում է դասախոսական կազմի վերապատրաստում, գնահատում, որակավորումների վերանայում: Դասախոսական կազմի արդյունավետության վերանայումը պետք է երաշխավորի դասախոսական կազմի որակի բարելավումը և աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Որակի ոլորտի քաղաքականությունների և ընթացակարգերի վերանայում

1.	Բոլոր քաղաքականությունները և ընթացակարգերը պետք է վերանայվեն յուրաքանչյուր հինգ տարին մեկ:
2.	Վերանայումը կարող է նաև կատարվել յուրաքանչյուր պահին, երբ առաջանում է դրա անհրաժեշտությունը:
3.	<i>Վերանայումը պետք է ներառի՝</i> • Խորհրդակցությունը քաղաքականության օգտագործող շահակիցների հետ, • Պահանջների համապատասխանության ուսումնասիրումը քաղաքականությունների և կարգերի/ընթացակարգերի միջև, • Քաղաքականության բովանդակության քննարկումը, • Քաղաքականության իրականացման գնահատումը:
4.	<i>Վերանայումը կարող է ավարտվել՝</i> – առանց փոփոխությունների կատարման, – աննշան շտկումներով, – հիմնական կետերի շտկումով, – փաստաթղթի չեղյալ համարումով:
5.	Վերանայման ավարտին վերանայման համար պատասխանատուն պետք է տեղեկացնի բոլոր ստորաբաժանումներին վերափոխումների վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման ընթացակարգ

1.	Մասնագիտությունների կրթական ծրագրի (ՄԿԾ) վերանայման ցիկլի պլանավորում
1.1.	ՄԿԾ-ի վերանայման գործընթացի պլանավորում
Բոլոր ՄԿԾ-երը պետք է ենթարկվեն վերանայման 5 տարին մեկ: Վերանայմանը ուղղված գործընթացը կազմակերպելու համար ֆակուլտետները պետք է ունենան անհրաժեշտ տեղեկատվություն: Վերանայումը կարող է պայմանավորված լինել ներքին գործոններով, ինչպես նաև ծրագրերի արտաքին փորձաքննությամբ՝ ծրագրային հավատարմագրմամբ:	
1.2.	Ակադեմիական ծրագրերի վերանայման գործընթաց
	<i>Վերանայման գործընթացը սկսելուց առաջ՝</i> – կազմվում է տեխնիկական առաջադրանք (Term of reference), – ձևավորվում է աշխատանքային խումբ, – կազմվում է աշխատանքային ժամանակացույց և կատարման փուլերի պլան:
1.2.1.	Տեխնիկական առաջադրանք
	<i>Վերանայման տեխնիկական առաջադրանքը պետք է ներառի՝</i> – ծրագրի նպատակը և խնդիրները և ռազմավարական համապատասխանեցումը, – ծրագրի համապատասխանությունը նորմատիվներին (ներառյալ համալսարանի քաղաքականությունները և ընթացակարգերը, հավատարմագրումը, արտաքին նորմատիվային պահանջները), – ուսանողների փորձը (ներառյալ ուսանողների ձեռքբերումները, նրանց պահանջարկի մակարդակը, ուսանողների բավարարվածության մակարդակը, համալրումը և մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին), – դասավանդման որակը և ուսումնական ծրագրերը, – ենթակառուցվածքը և նորարարությունը (այդ թվում՝ կադրային, նյութական միջոցները, ուսուցման տեխնոլոգիաները և այլն): Վերանայման մեթոդները պետք է հիմնված լինեն փաստերի վրա, ներառեն ծրագրի ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրություն և վերլուծություն, բացահայտեն բացթողումները և որոշեն բարելավման ուղղությունները:
1.2.2.	Աշխատանքային խմբի կազմում
	Աշխատանքային խմբում պետք է ներգրավված լինեն կրթական գործընթացի մեջ չներառված տվյալ ոլորտի մասնագետներ, արտադրության ոլորտի մասնագետներ, ծրագրի ֆակուլտետային պատասխանատուներ:
1.2.3.	Աշխատանքային ժամանակացույց
	Աշխատանքային ժամանակացույցում պետք է սահմանված լինեն վերանայման ժամկետները և վերանայման հիմնական փուլերը, ակնկալիք արդյունքները, հաշվետվողականության ժամկետները:
2.	Ակադեմիական ծրագրերի վերանայման իրականացում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

	– Ակադեմիական ծրագրերի վերանայման համար պատասխանատու է Ֆակուլտետի դեկանը կամ ակադեմիական ծրագրերի վերանայման համար պատասխանատու այլ անձ: – Վերանայման համար պատասխանատու անձը առաջարկում է տեխնիկական առաջադրանքը, աշխատանքային խումբը, աշխատանքային ժամանակացույցը: – Վերանայման համար պատասխանատու անձը առաջարկում և երաշխավորում է աշխատանքային խմբի համար: – Աշխատանքային խումբը վերլուծում է բոլոր փաստերը, որոնք անհրաժեշտ են վերանայման համար՝ տեխնիկական առաջադրանքի համաձայն: – Աշխատանքային խմբի ղեկավարը ներկայացնում է գրավոր հաշվետվություն, որը ներառում է վերանայման վերջնարդյունքները և առաջարկությունները: – Ֆակուլտետի դեկանը կամ համարժեք պատասխանատուն մշակում է պատասխան հաշվետվություն աշխատանքային խմբի հաշվետվության համաձայն, նշելով իր առաջարկությունները: – Կազմվում է ամփոփ հաշվետվություն:
3.	Հաշվետվողականություն
	– Ֆակուլտետի դեկանը կամ համապատասխան պատասխանատուն գիտական խորհուրդ ներկայացնում է վերանայման հաշվետվությունը: – Հարցը լսվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից և տրվում են առաջարկություններ հաշվետվության հաստատման համար: – Կազմվում է բարելավման կամ ուղղիչ գործողությունների պլան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության վերանայում

1.	<i>Ակադեմիական կազմի աշխատանքի արդյունավետության վերանայումը պլանավորվում և իրականացվում է՝</i> – պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության վերլուծության համար, – կադրերի կարիերայի զարգացմանը ուղղված պլանների մշակման համար, – պայմանագրերի վերակնքման կամ խզման համար:
2.	<i>Ակադեմիական կազմի աշխատանքի արդյունավետության վերանայումը իրականացվում է հետևյալ քայլերի կատարմամբ՝</i> – անընդհատ հետադարձ կապի ապահովում, – ակադեմիական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատում, – ձեռքբերումների արձանագրում, – զարգացման հնարավորությունների բացահայտում, – կադրերի զարգացման պլանների մշակում/բարելավում:
3.	Վերանայման շրջափուլը ներառում է աշխատակցի գործունեության գնահատումը և քննարկումների կազմակերպումը: Դա հնարավորություն է տալիս գնահատել դասախոսի գործունեությունը, վերլուծել նրա աշխատանքի արդյունավետությունը, ապահովել հետադարձ կապ և պլանավորել հետագա գործունեությունը:
4.	Յուրաքանչյուր դասախոս իր գործունեության վերաբերյալ պարտավոր է ներկայացնել հաշվետվություն: “Գործունեության հաշվետվությունը” փաստաթուղթ է, որը պատրաստվում է դասախոսի կողմից և համաձայնացվում ղեկավարի հետ, որտեղ ամփոփ ներկայացվում են պլանավորվող միջոցառումները ձեռքբերումների ոլորտներում, որոնք սահմանվում են որպես՝ • Դասավանդում, դրա արդյունավետությունը, առաջնորդությունը, • Հետազոտական գործունեությունը, և ստեղծագործական այլ գործունեություն, • Այլ ծառայություններ/ հասարակական աշխատանքներ, • Կարիերայի զարգացում, • Մասավոր արդյունքներ, • Հաշվետվություններ և գնահատումներ՝ ուղղված դասավանդման, հետազոտական և այլ ոլորտների վերաբերյալ: • Ռեսուրսների պահանջը և աջակցություն:
5.	Ակադեմիական կազմի արդյունավետության վերլուծությունը հիմնվում է ընթացակարգերի վրա, որոնք արտացոլվում են ուսանողների կողմից և ղեկավարի կողմից գնահատմամբ, ինչպես նաև վերանայող հանձնաժողովի կողմից վերանայումով:
6.	Արդյունավետության գնահատումը նաև պետք է ներառի աշխատողի մասնագիտական աճը:
7.	Վերանայման մեջ մտնում է նաև պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորումը: Ատեստավորումը ուղղված է նպաստել աշխատակիցների կրթական և ստեղծագործական պոտենցիալի ռացիոնալ օգտագործմանը, նրանց մասնագիտական մակարդակի բարձրացմանը, կադրերի ընտրության, պատ-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

	րաստման և տեղաբաշխման օպտիմալացմանը:
8.	Ատեստավորման անցկացման ժամանակ աշխատակիցների զբաղեցրած պաշտոնների համապատասխանության հաստատման, ինչպես նաև նրանց գործունեության արդյունավետության գնահատման համար պետք է օբյեկտիվ գնահատել՝ – աշխատակիցների գիտակրթական գործունեության արդյունքները դինամիկայում, – անձնական ներդրումը կրթության որակի բարձրացման մեջ, – անձնական ներդրումը գիտության մեջ, – մասնակցությունը կրթման և դաստիարակչական աշխատանքների մեջ, նոր կրթական տեխնոլոգիաների տիրապետումը:
9.	Վերանայման համար ստեղծվում է փորձագիտական հանձնախումբ, որը ուսումնասիրում է յուրաքանչյուր դասախոսի գործունեության արդյունքները և ձեռքբերումները:
10.	Եթե վերայումը ուղղված է աշխատակցի հետ պայմանագրի վերակնքմանը, ապա հանձնախումբը եղած հիմքերի վրա որոշում է կայացնում վերակնքել կամ խզել պայմանագիրը տվյալ աշխատակցի հետ:
11.	Եթե վերանայումը ուղղված է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը, ապա հանձնախումբը եղած հիմքերը ուսումնասիրելուց հետո որոշում է որտեղ ուղղել աշխատակցին վերապատրաստման համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Վերանայման ուղղություն	Մեխանիզմներ	Գործիքներ
Որակի ապահովման համակարգի վերանայում	– Որակի ապահովման համակարգի բաղադրիչների պարբերական մշտադիտարկում/աուդիտ: – Որակի ապահովման համակարգի գնահատում և վերլուծություն: – Որակի ապահովման համակարգի ներքին/արտաքին աուդիտ: – Հարցումների կազմակերպում շահակիցների շրջանակներում: – Որակի ապահովման համակարգի բենչմարքինգ: <i>Վերանայման գործընթաց ենթադրող մշտադիտարկումը</i> կարևոր է որակի ապահովման համակարգի աշխատանքի արդյունավետությունը երաշխավորելու համար: Վերանայմանը ուղղված Որակի ապահովման համակարգի ներքին և արտաքին աուդիտները նույնպես դիտարկվում են որպես <i>Որակի ապահովման վերանայում</i>: <i>Բենչմարքինգը</i> կարևոր մեխանիզմ է որակի համակարգի վերանայման և բարելավման համար: <i>SWOT վերլուծությունը</i> որպես ռազմավարական գնահատման մեխանիզմ հիմք է հանդիսանում որակի ապահովման վերանայման համար:	– Որակի վերանայման հարցաթերթիկներ և հարցաշարեր: – Որակի վերահսկմանը ուղղված ստուգման թերթիկներ: – Մշտադիտարկման թերթիկներ: – Ստուգման թերթիկներ: – Որակի համակարգին վերանայմանը ուղղված ռեկտորի հրամաններ: – Ռեկտորատի և գիտական խորհրդի որոշումներ: – Վերանայման հաշվետվություններ: – SWOT վերլուծության մատրից: – Բենչմարքինգի իրականացման գնահատման մատրիցներ:
Մասնագիտությունների կրթական ծրագրերի	Վերանայմանը ուղղված՝ – ՄԿԾ-երի և	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

գնահատում և վերանայում	դասընթացների ծրագրերի մշտադիտարկում, – ՄԿԾ-երի բենչմարքինգ, – ՄԿԾ-երի գնահատում:	
Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատում և վերանայում	– Դասախոսական կազմի որակավորման գնահատում և դասավանդման գնահատում: – Գնահատում ուսանողների կողմից: – Գնահատում ամբիոնի վարիչի կողմից և դասալսումների միջոցով:	
Ծառայություններ՝	– Համալսարանի ծառայությունների այլ կառուցվածային ստորաբաժանումների հետ և նրանց կապի գնահատում: – Կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության գնահատում՝ հետագա բարելավումը և կատարելագործումը կառավարելու նպատակով: Ենթադրվում է, որ համալսարանի ենթակառույցները պետք է կատարեն իրենց գործունեության վերանայումը և բարելավումը <i>բենչմարքինգի</i> միջոցով:	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


8. ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Որակի ապահովմանը ուղղված փաստաթղթերի վերանայում	Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր ԿԲՌՊՆՏ բաժնի վարիչ
Որակի ապահովման համակարգի կառուցվածքային վերանայում	Ռեկտորատ Գիտական խորհուրդ
Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում	Ֆակուլտետային ՄԿԾ-ի վերանայման աշխատանքային խմբեր Ֆակուլտետային մեթոդական խորհուրդ Համալսարանի մեթոդական խորհուրդ
Դասախոսական կազմի արդյունավետության վերանայում	Ֆակուլտետային գիտական խորհուրդ Որակավորման ֆակուլտետային հանձնաժողով Գիտական խորհուրդ
Որակի ապահովման համակարգի վերանայում	Վերանայող աշխատանքային խումբ Համալսարանի գիտական խորհուրդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հավելված Ա

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ/ՀՐԱՄԱՆ	
ՎԵՐԱՆԱՅՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ	
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏ	

№	Պահանջներ	Ինչ է հետազոտվում և ինչպես	այո	ոչ	Մեկնաբանություններ և նշումներ
1. Ընդհանուր պահանջներ					
1.1.	Արդյոք որակի ապահովման համակարգը փաստաթղթավորված է համաձայն ESG ստանդարտների:	Արդյոք որակի ապահովման բոլոր գործընթացներն են որոշված և սահմանված (գործընթացների քարտեզներ): Արդյոք որակի ապահովման գործընթացների համար մեթոդները և գործիքները ընտրված են: Արդյոք որակի ապահովման գործընթացների համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ: Արդյոք որակի ապահովման համակարգը ենթարկվում է մշտադիտարկման և չափումների (ներքին աուդիտ, հետադարձ կապի ապահովումը շահակիցների հետ և այլն):			
1.2.	Արդյոք որակի ապահովման գործընթացները հստակ են վերահսկվում (մշտադիտարկում/աուդիտ)	Ինչպես են վերահսկվում որակի ապահովման գործընթացները: Արդյոք ստուգվում է որակի ապահովման գործընթացը սպասվող արդյունքների հետ:			
2. Փաստաթղթային պահանջներ					
2.1. Ընդհանուր					
2.1.	Արդյոք ստորև նշված փաստաթղթերը սահմանված են, ներդրված և վերահսկվում են՝ – Որակի ապահովման քաղաքականությունը և նպատակները, – Որակի ապահովման ձեռնարկը, – Որակի ապահովման ընթացակարգերը:	Արդյոք որակի ապահովման քաղաքականությունը և նպատակները փաստաթղթավորված են: Առկա է արդյոք որակի ապահովման ձեռնարկը: Առկա են արդյոք փաստաթղթավորված ընթացակարգերը: Արկա են արդյոք այդ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները և հասանելի են արդյոք շահակիցների համար:			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2.2. Որակի ապահովման ձեռնարկ					
2.2.	Արդյոք որակի ապահովման ձեռնարկը ներառում է՝ – Որակի ապահովման նպատակները և խնդիրները: – Որակի ապահովման ընթացակարգերը: – Որակի ապահովման համակարգի կառուցվածքը:	Արդյոք որակի ապահովման ձեռնարկը համապատասխանում է ESG ստանդարտներին: Արդյոք որակի ապահովման ընթացակարգերը ներառված են որակի ապահովման ձեռնարկում կամ նրանցում հղում է կատարված ձեռնարկի վրա: Ինչպես է ներկայացված որակի ապահովման համակարգի կառուցվածքը ձեռնարկում:			
2.3. Փաստաթղթերի վերահսկում					
2.3.	Արդյոք առկա է ընթացակարգ, որը ուղղված է որակի ապահովման փաստաթղթերի վերահսկմանը, մասնավորապես՝ – Փաստաթղթերի վերանայումը և հաստատումը – Փաստաթղթերի վերանայումը, արդիականացումը և վերահաստատումը – Փաստաթղթերի հասանելիության ապահովումը – Չգործող փաստաթղթերի ոչնչացումը կամ արխիվացումը:	Արդյոք առկա է փաստաթղթերի վերահսկումը կազմակերպող ընթացակարգը: Արդյոք այդ փաստաթուղթը վերանայվում և արդիականացվում է:			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հավելված Բ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Մանրակ՝

1 – ոչինչ առկա չէ, 2 – գտնվում է պլանավորման փուլում, 3 – կան հասանելի հիմքեր, սակայն չկան կիրառման հստակ հիմքեր, 4- կան հասանելի փաստաթղթեր, և կան հիմքեր դրանց կիրառելիության վերաբերյալ, 5 –արդյունավետության վերաբերյալ հստակ հիմքեր, 6 – լավ փորձի օրինակ, 7 - գերազանց

	1	2	3	4	5	6	7
Որակի ապահովման քաղաքականություն/ռազմավարություն							
Համալսարանը ունի հստակ սահմանված որակի ապահովման քաղաքականություն							
Համալսարանը ունի հստակ սահմանված որակի ոլորտի ռազմավարություն							
Որակի ոլորտում շահակիցների դերը հստակ սահմանված է							
Ընդհանուր կարծիք							
Մշտադիտարկում							
Հետադարձ կապը ուսանողներից							
Հետադարձ կապը դասախոսական կազմից							
Հետադարձ կապը գործատուից							
Հետադարձ կապը շրջանավարտից							
Ընդհանուր կարծիք							
Համալսարանի հիմնական գործունեության պարբերաբար վերանայում (կրթություն, հետազոտական ոլորտ, այլ ծառայություններ)							
Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար վերանայում							
Դասավանդման/ուսումնառության պարբերաբար վերանայում							
Հետազոտական ոլորտի պարբերաբար վերանայում							
Ընդհանուր կարծիք							
Ուսանողների գնահատման որակի ապահովում							
Գնահատման չափանիշների հստակ սահմանում							
Գնահատման ընթացակարգերի առկայություն							
Գնահատման որակը երաշխավորող կարգերի առկայություն							
Բողոքարկման ընթացակարգերի առկայություն							
Ընդհանուր կարծիք							



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դասախոսական կազմի որակի ապահովում							
Դասախոսական կազմի ընտրության և նշանակման ընթացակարգ							
Դասախոսական կազմի գնահատման համակարգ							
Դասախոսական կազմի զարգացման համակարգ							
Ընդհանուր կարծիք							
Ռեսուրսային ապահովվածություն							
Համակարգչային ռեսուրսների մշտադիտարկում							
Գրադարանային ռեսուրսների մշտադիտարկում							
Լաբորատոր բազայի մշտադիտարկում							
Ընդհանուր կարծիք							
Ուսանողների աջակցության/խորհրդատվության որակի ապահովում							
Ուսանողների համար տեղեկատվության ապահովում							
Խորհրդատվություն ուսանողների շրջանում							
Ուսանողների բարեկեցության ապահովում							
Ուսանողների հանրակացարանային ապահովում							
Ընդհանուր կարծիք							
Ինքնագնահատում							
Որակի ապահովման համակարգի ինքնագնահատում							
Դասավանդման և ուսումնառության ինքնագնահատում							
Հետազոտական ոլորտի ինքնագնահատում							
Համալսարանի գործունեության ինքնագնահատում							
Ընդհանուր կարծիք							
Ներքին աուդիտ							
Դասավանդման/ուսումնառության ներքին աուդիտ							
Հետազոտական ոլորտի ներքին աուդիտ							
Համալսարանի ներքին աուդիտ							
Ընդհանուր կարծիք							
Տեղեկատվական համակարգ							
Տեղեկատվական կառավարման համակարգի առկայություն							
Դասավանդման/ուսումնառության համար տեղեկատվական համակարգ							
Հետազոտական ոլորտի տեղեկատվական համակարգ							
Ընդհանուր կարծիք							
Հանրային տեղեկատվության ապահովում							
Համալսարանի գործունեության վերաբերյալ հանրային տեղեկատվություն							
Կրթական ծրագրերի և որակավորումների վերաբերյալ տեղեկատվություն հանրությանը							
Հետազոտական ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն հանրությանը							
Ընդհանուր կարծիք							



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Որակի ձեռնարկ							
Որակի ձեռնարկի առկայություն							
Ձեռնարկի հասանելիությունը աշխատողների և ուսանողների համար							
Ընդհանուր կարծիք							
Վերջնական կարծիք							



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հավելված Գ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐ/ԴԱՍԸՆԹԱՑ	
ՎԵՐԱՆԱՅՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ	
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏ	

№	Պահանջներ	Ինչ է հետազոտվում և ինչպես	այո	ոչ	Մեկնաբանություններ և նշումներ
	ՄԿԾ-ի նպատակները/ուսումնառության վերջնարդյունքները				
	Արդյոք հստակ սահմանված են ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները	Արդյոք առկա են փաստաթղթավորված ՄԿԾ-երը, հստակ սահմանված են դրանց նպատակները և խնդիրները:			
	Արդյոք հստակ սահմանված են ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքները՝ հիմնվելով ՄԿԾ-ի նպատակների վրա	Արդյոք ՄԿԾ-երում առկա են ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները:			
	ՄԿԾ-երի մշտադիտարկում, գնահատում, վերանայում				
	Արդյոք ՄԿԾ-ն ենթարկվել է մշտադիտարկման	Արդյոք առկա է ՄԿԾ-երի մշտադիտարկման կարգը: Արդյոք առկա են մշտադիտարկման գործիքներ:			
	Արդյոք ՄԿԾ-երը պարբերաբար գնահատվում են շահակիցների կողմից	Արդյոք առկա է ՄԿԾ-երի գնահատման կարգը: Արդյոք առկա են ՄԿԾ-երի գնահատման մեխանիզմները և գործիքները: ՈՒՄ կողմից է գնահատվում ՄԿԾ-ն:			
	Արդյոք ՄԿԾ-երը ենթարկվում են վերանայման	Արդյոք առկա է ՄԿԾ-երի վերանայման կարգը: Արդյոք պարբերաբար իրականացվում է ՄԿԾ-երի վերանայում և արդիականացում:			
	Դասավանդում/ ուսումնառություն				
	Արդյոք ՄԿԾ-երում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մեթոդները և մոտեցումները:	Արդյոք ՄԿԾ-երում ներկայացված են դասավանդման մեթոդները և արդյոք համապատասխանում են ակնկալվող ուսումնառության արդյունքներին:			
	Արդյոք դասավանդման/ուսումնառության մեթոդները պարբերաբար մշտադիտարկվում և գնահատվում են շահակիցների կողմից:	Արդյոք իրականացվում է դասավանդման/ուսումնառության մեթոդների մշտադիտարկում: Արդյոք առկա են մշտադիտարկման և գնահատման գործիքներ:			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

	Դասախոսական կազմի որակի ապահովում				
	Արդյոք սահմանված են դասախոսական կազմի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը	Արդյոք առկա է և հստակ սահմանված են համալսարանի դասախոսական կազմի գնահատման քաղաքականությունը: Արդյոք առկա են փաստաթղթեր, որոնք արտացոլում են գնահատման ընթացակարգը:			
	Արդյոք ՄԿԾ-երում հստակ սահմանված են դասախոսական կազմի վրա դրվող պահանջները:	Արդյոք առկա են հստակ սահմանված դասախոսական կազմի վրա դրվող պահանջները: Արդյոք պարբերաբար վերանայվում են դասախոսական կազմի վրա դրվող պահանջները: Ուժ կողմից է դա իրականացվում:			
	Արդյոք դասախոսական կազմը պարբերաբար գնահատվում է:	Արդյոք առկա են դասախոսական կազմի գնահատման կարգերը: Արդյոք պարբերաբար իրականացվում է դասախոսական կազմի գնահատում: Արդյոք առկա են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ և գործիքներ:			
	Արդյոք առկա է դասախոսական կազմի վերապատրաստման և արդյունավետության բարձրացման համակարգ:	Արդյոք Համալսարանում առկա է դասախոսական կազմի որակավորումով զբաղվող կառույց: Արդյոք կանոնակարգված է դասախոսական կազմի որակավորման բարձրացումը: Արդյոք համալսարանը ունի կնքված պայմանագրեր այլ համալսարանների և կազմակերպությունների հետ՝ որակավորման բարձրացման խնդիրները լուծելու համար:			
	Ռեսուրսային ապահովվածություն				
	Արդյոք համալսարանը ապահովված է անհրաժեշտ ռեսուրսային բազայով ՄԿԾ իրականացնելու համար:	Արդյոք յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար սահմանված են անհրաժեշտ ռեսուրսները: Արդյոք առկա ռեսուրսները ապահովում են յուրաքանչյուր ՄԿԾ-ի իրականացումը:			
	Արդյոք իրականացվում է ռեսուրսային բազայի գնահատում շահակիցների կողմից:	Արդյոք առկա են ռեսուրսային բազայի գնահատման մեխանիզմներ և գործիքներ: Արդյոք պարբերաբար իրականացվում է առկա ռեսուրսային բազայի գնահատում:			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

	Արդյոք գնահատման արդյունքների հիման վրա իրականացվում է ռեսուրսային բազայի արդիականացում:	Արդյոք առկա է ռեսուրսային բազայի արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ:			
	Ուսանողների գնահատում				
	Արդյոք առկա է ուսանողների գնահատման քաղաքականություն և կարգ	Արդյոք առկա են ուսանողների գիտելիքների գնահատման փաստաթղթային նորմատիվային փաստաթղթերը: Արդյոք պարբերաբար վերանայվում են սույն փաստաթղթերը:			
	Արդյոք ՄԿԾ-ում սահմանված են գնահատման չափանիշները և մեթոդները	Արդյոք առկա են սահմանված գնահատման չափանիշները և մեթոդները: Արդյոք դրանք համապատասխանում են ակնկալվող ուսումնառության արդյունքներին հասնելու համար:			



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հավելված Դ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

1 – ոչինչ առկա չէ, 2 – գտնվում է պլանավորման փուլում, 3 – կան հասանելի հիմքեր, սակայն չկան կիրառման հստակ հիմքեր, 4- կան հասանելի փաստաթղթեր, և կան հիմքեր դրանց կիրառելիության վերաբերյալ, 5 –արդյունավետության վերաբերյալ հստակ հիմքեր, 6 – լավ փորձի օրինակ, 7 - գերազանց

	1	2	3	4	5	6	7
Կրթական ծրագրերի նպատակները և խնդիրները, ակնկալվող ուսումնառության արդյունքները							
Կրթական ծրագրերում հստակ սահմանված են ուսումնառության վերջնարդյունքները							
Կրթական ծրագիրը նպաստում է ուսումնառությանը՝ սովորելու և հարատև ուսուցման համար							
Ակնկալվող ուսումնառության արդյունքները ներառում են ընդհանուր գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև հատուկ գիտելիքներ և հմտություններ							
Ուսումնառության ակնկալվող արդյունքները հստակ արտացոլում են շահակիցների պահանջները							
Ընդհանուր կարծիք							
Կրթական ծրագրերի բովանդակությունը							
Կրթական ծրագրի բովանդակությունը ցույց է տալիս բալանսը ընդհանուր և հատուկ գիտելիքների և հմտությունների միջև							
Կրթական ծրագիրը արտացոլում է համալսարանի առաքելությունը և ռազմավարությունը							
Կրթական ծրագրի բովանդակությունը համապատասխանում է ակնկալվող ուսումնառության արդյունքներին							
Ընդհանուր կարծիք							
Կրթական ծրագրերի առանձնահատկությունները							
Կրթական ծրագրերի առանձնահատկությունը ցույց է տրվում ակնկալվող ուսումնառության արդյունքներով							
Կրթական ծրագրերի առանձնահատկությունները հասանելի են շահակիցներին							
Ընդհանուր կարծիք							
Կրթական ծրագրերի կազմակերպումը							
Ուսումնական պլանները և բոլոր առարկաները և դասընթացները համահունչ են և ինտեգրված							
Ուսումնական պլանները ներկայացված են ընդլայնված և խորացված ձևով							
Ուսումնական պլանները հստակ ցույց են տալիս հիմնական դասընթացները, միջանկյալ դասընթացները, մասնագիտական դասընթացները, վերջնական նախագիծը (դիպլոմային, թեզիս, և այլն)							
Ուսումնական պլանները վերանայված են							
Ընդհանուր կարծիք							



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դիդակտիկ հայեցակարգ/ Դասավանդման /ուսումնառության ռազմավարություն							
Դասավանդող կազմը ունի հստակ դասավանդման ռազմավարություն							
Դասավանդման/ուսումնառության ռազմավարությունը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերել եւ կառավարել գիտելիքները ակադեմիականորեն							
Դասավանդման/ուսումնառության ռազմավարությունը ուսանողակենտրոն է և խթանում է որակյալ ուսուցում							
Ուսումնական պլանը խթանում է ակտիվ ուսուցում							
Ընդհանուր կարծիք							
Ուսանողների գնահատում							
Ուսանողի գնահատումը համարվում է ուսանողի մոտքը համալսարան, նրա առաջադիմությունը և ելքային արդյունքները (վերջնական ատեստավորում)							
Գնահատման մեթոդների առկայությունը							
Գնահատումը արտացոլում է ակնկալվող ուսումնառության արդյունքները և կրթական ծրագրի բովանդակությունը							
Գնահատման չափանիշները հստակ են և հայտնի են							
Գնահատման մեթոդները համապատասխանում են ուսումնառության վերջնարդյունքներին							
Ընդհանուր կարծիք							
Դասախոսական կազմի որակի ապահովում							
Դասախոսական կազմը կոմպետենտ է իրականացնել իր խնդիրները և համապատասխանում է չափանիշների պահանջներին							
Դասախոսների վրա դրվող պահանջները սահմանված են և հայտնի են							
Դասախոսական կազմը համապատասխանում է իրականացվող պաշտոնին							
Դասախոսական կազմը պարբերաբար գնահատվում է որակը բարձրացնելու համար							
Առկա է հստակ դասախոսական կազմի գնահատման համակարգ							



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Առկա է հստակ վերապատրաստման և վերաորակավորման համակարգ							
Ընդհանուր կարծիք							
Աջակցություն ուսանողին							
Առկա է ուսանողների առաջադիմության համակարգ							
Ընդհանուր կարծիք							
Ռեսուրսներ և ենթակառուցվածք							
Դասավանդման ռեսուրսների առկայություն և արդիականություն (լսարանային բազա դասախոսությունների և փոքր խմբերի համար)							
Գրադարանը համապատասխանում է պահանջներին և թարմացված է							
Լաբորատորիաները համապատասխանում են պահանջներին և թարմացված են							
Համակարգչային ռեսուրսները համապատասխանում են պահանջներին և թարմացված են							
Ընդհանուր կարծիք							
Որակի ապահովում							
Կրթական ծրագրերը պարբերաբար գնահատվում են							
Կրթական ծրագրերի/ ուսումնական պլանների վերանայումը տեղի է ունենում ողջամիտ ժամկետներում							
Առկա է գնահատման համակարգի որակի ապահովում							
Ընդհանուր կարծիք							
Ուսանողների գնահատում							
Առկա է հստակ սահմանված ընդունելության քաղաքականություն							
Առկա է կրեդիտային համակարգով սահմանված գնահատման քաղաքականություն և կարգ							
Առկա են հստակ սահմանված գնահատման ձևերը և մեթոդները							
Ընդհանուր կարծիք							
Հետադարձ կապ շահակիցներից							
Առկա է համապատասխան կառուցվածքային հետադարձ կապ աշխատաշուկայի ներկայացուցիչներից և գործատուներից							
Առկա է համապատասխան կառուցվածքային հետադարձ կապ շրջանավարտներից							

Ֆակուլտետ _____
Մասնագիտության կրթական ծրագրի անվանումը _____
Ֆակուլտետի դեկան _____
Մասնագիտության կրթական ծրագրի վերանայող հանձնաժողով/աշխատանքային խումբ _____ _____ _____ _____
Վերանայման տևողություն _____
Վերանայման հաշվետվություն



Վերանայման ծրագիրը

1. Մասնագիտության կրթական ծրագիրը

Մասնագիտության կրթական ծրագրի անվանումը	
Որակավորման աստիճանը (բակալավր, մագիստր)	
Որակավորումների ազգային շրջանակի մակարդակը	
Կրեդիտների թիվը	
Ծրագրի տևողությունը	
Ծրագրի հաստատման ամսաթիվը	
Ծրագրի վերջին վերանայման ամսաթիվը	
Ծրագրի համառոտ բովանդակությունը <ապահովել վերանայվող ծրագրի համառոտ ուրվագիծը ներառյալ՝ նպատակները և խնդիրները>	

2. Մասնագիտության կրթական ծրագրի դասընթացները

<Դասընթացների ցուցակը>

3. Հիմնական մաս

<Վերլուծել և ապահովել մանրամասն եզրակացություններ նշված կետերից յուրաքանչյուրի համար>

<Ապահովել ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, բարելավմանը ուղղված գործողությունները կետերից յուրաքանչյուրի համար>

1. Նպատակները և խնդիրները
2. Ուսումնական պլան
3. Գնահատում
4. Դասախոսական կազմ
5. Ռեսուրսներ և աջակցություն
6. Ներքին որակի ապահովման համակարգ
7. Ֆինանսական ռեսուրսներ:

4. Եզրակացություններ

<Երեք կետերի վերաբերյալ կատարած վերլուծության հիման վրա ապահովել առաջարկություններով>

5. Հավելվածներ

<Կցել այլ տվյալներ և փաստաթղթեր, որոնք ապացուցում են եզրակացությունում կատարած նշումները>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հավելված Է

Որակի ոլորտի փաստաթղթերի մեջ փոփոխությունների կատարման ձևաթերթ

Փաստաթղթի մեջ փոփոխության կատարում	
Փաստաթղթի կոդը	
Փաստաթղթի անվանումը	
Փոփոխության կատարման պատճառը	
Կատարվող փոփոխությունները (բաժին, կետ, ենթակետ)	
Առաջարկվող փոփոխություններ	
Առաջարկվող փոփոխությունների բովանդակությունը	
Փոփոխությունների կատարման պատասխանատու	_____ Անուն, ազգանուն
Կատարված փոփոխությունների հաստատման ամսաթիվ	“ ____ ” _____ 201_ թ.
Փոփոխությունների ներդրումը գործածության մեջ	“ ____ ” _____ 201_ թ.